ԱՂՎԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Պատմ. գիտ. թեկնածու Հ. Ս. ՍՎԱՋՅԱՆ

Աղվանից մարզպանության կազմավորումը, որը երկրի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքում առաջ բերեց թե՛ տարածքային և թե՛ որակական փոփոխություններ, մինչև այսօր էլ մնում է որոշակիություն չստացած, բարդ ու խճճված մի հարց։

Ուսումնասիրողները մարզպանության կազմավորումը դիտել են որպես սոսկ տարածքային փոփոխություններով պայմանավորված մի պրոցես և անտեսելով մյուս սոցիալ-քաղաքական գործոնները, Աղվանից մարզպանության առաջացման ժամանակն ու պատճառները որոշում են ըստ այդ փոփոխությունների։ Եվ քանի որ Աղվանքը քաղաքական ու տնտեսական կյանքի բոլոր ոլորտներով սերտորեն կապված էր Մեծ Հայքի հետ, ուստի և կասկածի ենթակա չէր համարվում, որ 387 թ. արևելյան երկու խոշոր տերությունների միջև Մեծ Հայքի բաժանումից հետո նրա կազմից անջատվեցին Արցախ և Ուտիք նահանգները իրենց գավառներով ու տրվեցին Աղվանքին և այնտեղ նույն թվականին ստեղծվեց մարզպանություն[1]։ Հետագայում, երբ աղբյուրների ուսումնասիրությամբ եղրակացվեց, որ հիշյալ նահանգները Մեծ Հայքի կազմում մնացել են մինչև Արշակունյաց հարստության վերացումն ու մարզպանության առաջացումը, այն է՝ 428 թ.,[2] տեղաշարժվեց նաև Աղվանից մարզպանության կազմավորման տարեթիվը, առաջ բերվելով մինչև նշված թվականը[3]։

Աղվանից մարզպանության ստեղծման հարցում Ս. Տ. Երեմյանի վաղ

---

1 С. Т. Еремян, Политическая история Албании III—VII вв., «Очерки истории СССР III—IX вв., М., 1958, *էջ 314։ Բայց պետք է նշել, որ իր վաղ շրջանի աշխատություններում Աղվանից մարզպանության կազմավորման տարեթիվը Ս. Տ. Երեմյանը համարել է 461 թ. (տե՛ս* «История СССР, кн. II, ч. III—IV (макет), М.—Л., 1939, *էջ 161)։ Ա. Շ. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 18։* Б. Улубабян, История Арцаха (начиная с древнейших времен до X века). Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1969, *էջ 14։*

2 *Բ. Ուլուբաբյան, Աղվանից թագավորական տան հարցի շուրջը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1971, № 7, էջ 53, ծան 1։ Նույնի՝ Հյուսիս-արևելյան Հայաստանի նախամարզպանական շրջանի վարչա-քաղաքական վիճակի հարցի շուրջը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1975, № 2, էջ 160։ Ըստ Ն. Ակինյանի հիշյալ գավառները «Աղվանից վերադարձվեցան» «297-ին, Մեծ Հայաստանի Դիոկղետյան բաժանումի ժամանակ» (տե՛ս Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի (կոչված Կաղանկատվացի) և իր Պատմութիւնն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 1)։ Այն տպավորությունն է ստեղծվում, թե հիշյալ նահանգները պատկանելիս են եղել Աղվանքին և այժմ ետ են վերադարձվում։*

3 *Բ. Ուլուբաբյան, Հյուսիս-արևելյան Հայաստանի..., էջ 149։ Նույնի՝ Աղվանից թագավորական տան հարցի շուրջը, էջ 53, 60։ Նույնի՝ Խաչենի իշխանությունը X—XIV դարերում, Երևան, 1975, էջ 57։ Սակայն Բ. Ուլուբաբյանը չի նշում նախկինում հայտնած իր կարծիքը քննարկվող հարցի մասին (տե՛ս ծան. 1)։*

շրջանում հայտնած կարծիքին է հետևում Կ. Վ. Տրևերը, որը այդ առթիվ գրում է. «Վաչե II-ը մոտ 461 թ. հրաժարվեց գահից և դրանից հետո Աղվանքը կառավարում էին պարսիկ մարզպանները»[4]։

Ահա այսպիսի և նման այլ իրարամերժ ու փոփոխական կարծիքներ են հայտնվել մեր պատմագրության մեջ Աղվանից մարզպանության կազմավորման ժամանակի ու պատճառների մասին։

Մարզպանությունների ստեղծումը Պարսկաստանի համար ինքնանպատակ չէր, այլ բխում էր երկրի կառավարման վարչական-տնտեսական վիճակից։ Ուստի մարզպանություններ ստեղծելիս պարսից արքունիքը անկասկած հաշվի էր առնում դրա անհրաժեշտությունը և առաջնորդվում որոշակի սկզբունքներով։

V դարում սերկատիրությունը սասանյան Պարսկաստանում իր տեղը զիջել էր զարգացման ավելի բարձր աստիճանի՝ ֆեոդալական հասարակարգին։ Նոր պայմաններում, բայց հին սկզբունքներով, դեռևս Դարեհ I-ի (մ. թ. ա. 522—485 թթ.) ստեղծած սատրապությունները փոխարինվեցին մարզպանություններով, որի հետևանքով վերացվում էին տեղական թագավորական իշխանությունները։ «428 թվի մեծ հեղաշրջմանը հետևած կառավարչական ձևն իսկապես նոր չէր, այլ այն հին պետական սկզբունքն էր ներկայացնում, որ Արևելքը գործադրում էր իր բոլոր մեծ նվաճողական պետությունների մեջ»[5]։

Պարսիկների այդօրինակ քաղաքականությունը էլ ավելի ակնառու է Հայաստանի օրինակով։ 428 թ., Արշակունյաց թագավորության վերացումից հետո, պարսից կառավարող վերնախավը Մեծ Հայքը դարձրեց մարզպանություն։ Նոր ժամանակները Սասանյանների առջև դրել էին նոր, ավելի հեռուն գնացող նպատակներ. վերջնականապես իրենց ենթարկել Անդրկովկասը, այն դարձնել պարսից տերության մի մասը, ոչնչացնել հայերի, վրացիների և աղվանների քաղաքական ու մշակութային անկախությունը։ Այդ նպատակով ձեռնարկված միջոցառումների շարքում առաջին քայլը մարզպանությունների ստեղծումն էր. նախ՝ մարզպանությունների ստեղծում և ապա՝ ինքնուրույնության տարբեր դրսևորումների աստիճանական վերացում։ Այդպիսի հետևողականություն էր ցուցաբերում Պարսկաստանը Հայաստանում, ուր 428 թ. վերացվեց թագավորությունն ու ստեղծվեց մարզպանություն նախարարական իրավունքների պահպանմամբ, ապա սկսեցին կիրառվել նաև այդ իրավունքների վերացմանն ուղղված միջոցառումներ. անցկացվեց նոր աշխարհագիր, հաշարապետության ու մեծ դատավորի պաշտոնը հանձնվեց պարսիկ պաշտոնյայի, եկեղեցին և հոգևորականությունը դարձան հարկատու և այլն։

Կարծում ենք, որ Աղվանքում էլ մարզպանություն հաստատելիս Սասանյանները չպետք է շեղվեին իրենց արդեն ծանոթ ու համարյա կանոն դարձած քաղաքականությունից։ Ուստի և նրանք ամենից առաջ պետք է վերացնեին Աղվանից թագավորությունը, որի գոյությունը անկախության ձգտում և հայրենասիրական, ազատագրական զգացմունքներ էր առաջացնում։ Այսպես օրինակ, Վաչե II-ը, օգտվելով Պարսկաստանում երկու եղբայրների միջև

---

[4] К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании (IV в. до н. э.—VII в. н. э.), М.—Л., 1959, էջ 225։

[5] Լեո, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1967, էջ 12։

գահի համար ծագած պատերազմից, ապստամբեց և մի ամբողջ տարի կռվեց պարսից նորընծա արքա Պերոզի դեմ։ Ապստամբությունը ճնշելուց հետո Պերոզը (457—484 թթ.), հակառակ պատմիչի այն հավաստիացումներին, թե Վաչեն ինքը հրաժարվեց թագավորությունից, գահից հեռացնում է Աղվանից արքային և Աղվանքը դարձնում մարզպանություն։ Այսպիսի ենթադրության համար հիմք են ծառայել Մովսես Կաղանկատվացու մի շարք վկայությունները։ Վերջիններիցս է պատմիչի այն հաղորդումը, թե Վաչե II-ին գահից հեռացնելուց հետո «ամենաչար և ամբարիշտ թագաւորն պարսից զայրագնեալ մոլեգնէր իբրև զկատաղեալ շուն՝ կամէր բառնալ զամենայն թագաւորութիւնս աշխարհի, միանգամայն շարժել զեկեղեցիս, բառնալ զկարգ քրիստոնեութեան և հաստատել, կարգել յիւրում իշխանութեան զմոլեգնութեան դիւապաշտութիւն»[6]։ Վկայակոչված հատվածի ընդգծված տողերը ցույց են տալիս Աղվանքի քաղաքական կյանքում Պերոզի մտցրած նոր վարչական փոփոխությունները։ «Կամէր բառնալ զամենայն թագաւորութիւնս» արտահայտությունը, ենթադրելով թագավորության գոյություն, չէր նշանակում սոսկ նրա վերացում, այլ ընդհանրապես այն ամենի, ինչը պայմանավորում է երկրում թագավորության գոյությունը։

Քննարկվող հարցի համար առանձնակի կարևորություն ունի Մովսես Կաղանկատվացու այն վկայությունը, թե Վաչե II-ին գահից հեռացնելիս նրան տրվեց միայն իր հայրական ժառանգություն «հազար երդը»։ «Իսկ սա (Վաչեն—Հ. Ս.) հաճեցաւ միայն զսեպհականն առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն էր առեալ հազար երդ, առ զայն ի թագաւորէն և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ»[7]։ Կաղանկատվացու այս վկայությունը մի լուրջ փաստարկ է Աղվանքում թագավորության վերացումից հետո միայն մարզպանություն ստեղծելու կարծիքի օգտին։ Ուրեմն Վաչե II-ին թույլատրվել էր վերցնել լոկ իրենը՝ իր սեփական հազար երդը, որը ժառանգություն էր ստացել հորից։ Նրա իրավասության տակից դուրս էին մնացել արքունական կալվածքները, որոնք անցան հաղթողին, տվյալ դեպքում՝ Պարսկաստանին։ Իսկ պատմական աղբյուրների քննությունը ապացուցում է, որ Պարսկաստանը մարզպանություններ ստեղծելիս առաջին հերթին յուրացնում էր հենց արքունական կալվածքները։

Այսպիսով, մեր քննությունը հանգեցնում է այն հետևության, որ իրոք, Աղվանից մարզպանությունը ստեղծվել է Վաչե II-ի գահից հեռացվելուց ու թագավորության վերացումից հետո միայն, այն է՝ 461 թ. և ոչ թե 387[8], 428 թթ. կամ «անմիջապես 451 թ. կամ էլ 451—481 թթ. ընթացքում»[9]։

---

6 «Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», Թիֆլիս, 1912, էջ 52 (այս և մյուս ընդգծումները մերն են)։

7 Նույն տեղում, էջ 24։

8 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 230։ Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա., Երևան, 1957, էջ 241։ Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 34։ В. Ф. Минорский, История Ширвана и Дербенда, М., 1963, էջ 28 և այլն։

9 Բ. Հարությունյան, Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387—451 թթ., «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, № 2, էջ 92։

Աղվանից մարզպանության կազմավորումը երկրում առաջացրեց քաղաքական, սոցիալ-տնտեսական ու տարածքային նորորակ փոփոխություններ։ Որպես նրա հետևանք Հայաստանից անջատվեցին և Աղվանքին միացվեցին Արցախ և Ուտիք նահանգները և Աղվանքի հարավային սահմանը հասցվեց մինչև Արաքս գետը։ Դա մի միջոցառում էր, որով Պարսկաստանը ոչ միայն մասնատելով թուլացնում, ջլատում էր Հայաստանը, այլև ստեղծում էր հարկային-վարչական մեկ միավոր։ Բնականաբար, այդպիսի միավորների կազմավորումը պետք է ուղեկցվեր նաև տարածքային փոփոխություններով, և Սասանյանները այդպես վարվեցին Աղվանից մարզպանությունը կազմավորելիս ևս՝ Աղվանքի բուն տարածքին միացնելով Արցախ և Ուտիք նահանգները։ Վերջիններս միացվեցին և ոչ թե տրվեցին կամ վերադարձվեցին Աղվանքին և կամ, ինչպես Կ. Վ. Տրևերն է կարծում, նվաճվեցին Աղվանքի թագավորների կողմից[10]։ Այդ նույն ժամանակ անջատվեց Փայտակարան նահանգը և միացվեց Ատրպատականին։

Նոր վարչական միավորի կազմավորմամբ Աղվանից ֆեոդալները ամբողջովին ենթակա դարձան Պարտավում նստող Աղվանից մարզպանին, որն իրականացնում էր պարսից քաղաքականությունը մարզպանության ընդգրկած տարածքում՝ պահպանում էր պարսից պետության շահերը, հսկում էր երկիրը և հավաքում ու արքունի գանձարանն էր ուղարկում պետական հարկերը։ Հետևաբար, հաղիվ թե ճիշտ լինի Կ. Վ. Տրևերի կարծիքը այն մասին, որ «հայ նախարարների և Իբերիայի ու Աղվանքի ֆեոդալների վասալական կախվածությունը (Սասանյաններից—Հ. Ս.) արտահայտվում էր և զինվորական, և քաղաքացիական իշխանություններն իր ձեռքում կենտրոնացրած և սկզբում Արտաշատում, ապա Դվինում նստող պարսից մարզպանին ենթակա լինելով»[11], որից բխում է, թե Անդրկովկասյան այս երեք երկրները ենթարկվել են մեկ ընդհանուր մարզպանի՝ Հայաստանի մարզպանին։

Աղվանից մարզպանության ստեղծման ժամանակը 461 թ. ընդունելուց հետո կարող է առաջանալ նաև շատ բնական մի հարց. ինչո՞ւ Աղվանքում այն ավելի ուշ կազմավորվեց քան Մեծ Հայքում։

Անդրկովկասյան երկրների մեջ այդ շրջանում պարսից թագավորության համար առավել կարևոր էր Մեծ Հայքը։ Ղազար Փարպեցին մեկից ավելի վկայություններ ունի անդրկովկասյան մյուս երկու պետությունների նկատմամբ Հայաստանի դերի, հեղինակության ու ազդեցության վերաբերյալ պարսից արքունիքի ունեցած բարձր կարծիքի մասին[12]։ Հետևաբար, Անդրկովկասը վերջնականապես իրենց ենթարկելու առաջին քայլը Սասանյանները պետք է որ աներ նախ Հայաստանը իրենց ենթարկելով։ Այդ պատճառով էլ մարզպանությունը այստեղ կազմավորվեց ավելի շուտ (428 թ.), քան մյուս երկրներում։

Պարսից արքունիքը եռանդուն կերպով շարունակում էր Անդրկովկասին վերջնականապես տիրելու գործը։ Նա ձգտում էր հաստատուն կերպով ամրանալ Կասպից ծովի ողջ արևմտյան մերձափնյա շրջանում։ Այս բանին մեծ

---

10 К. В. Тревер, Очерки..., էջ 201 («после 387 г. албанским царям удалось присоединить к своим владениям области Арцах (Карабах) и Утик»).

11 Նույն տեղում։

12 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան», Թիֆլիս, 1907, էջ 87, 88, 90, 351։

չափով խանգարում էին հյուսիսային վաչկատուն ցեղերի հարձակումները. մանավանդ V—VI դդ., երբ խիստ հաճախակի են դառնում կովկասյան քոչվոր լեռնականների և հատկապես խազարների ասպատակությունները։ Վերջիններս, ըստ արաբ պատմիչների, նույնիսկ գրավել էին Վրաստանն ու Աղվանքը։ «Ջուրզանը և Առանը,— գրում է, օրինակ, Բալաձորին,— գտնվում էին խազարների ձեռքում»[13]։ Ուստի և Վաղարշի հաջորդները (Կավատ I, Խոսրով Անուշիրվան) իրենց ուշադրությունը կենտրոնացրին այս խոցելի տեղերը ամրապնդելու վրա և ձեռնամուխ եղան Կասպից ծովի արևմտյան ափը խազարներից մաքրելու գործին։ Այդ են վկայում արաբ պատմիչներ Բալաձորին և Յակուտ ալ Համավին՝ վկայակոչելով պարսից մատենագիրներին. «Ջուրզանը և Առանը անցյալում խազարների ձեռքում էին, ...խազարները ասպատակում էին երկրի խորքերը և հաճախ առաջանում մինչև Դայնավար։ Սրա վրա Կուբազ իբն Ֆիրուզ թագավորը (Կավատը—Հ. Ս.) մի զորավար ուղարկեց իր մեծագույն զորավարներից՝ 12 հազար զորքով, որը Առանը ընկճելուց հետո հասավ Առ Ռաս կոչված գետի մոտ և գրավեց այնտեղից մինչև Շիրվան տարածվող երկրամասը։ Կուբազը ինքը իր զորավարի ետևից հասնելով, խազարներին տեղահան անելուց հետո, Առանում կառուցել տվեց Բայլական և Բարդաա (Պարտավ—Հ. Ս.) քաղաքները, որը ամբողջ սահմանային քաղաքների կենտրոնն էր, նաև Կաբալան՝ խազարների դեմ։ Ապա նա կառուցեց Սուդ ալ Լաբանը՝ Շիրվանի և Ալանաց երկրի մեջտեղը և Սուդ ալ Լաբանի շուրջը կանգնեցրեց 360 քաղաքներ, որոնք քանդվեցին Բաբ ալ Աբվաբի շինվելուց հետո։ Կուբազից հետո թագավորեց իր որդին՝ Անուշիրվանը, որը կառուցեց ալ-Շաբրան քաղաքը, ինչպես նաև՝ Մասկատ քաղաքը։ Հետո կառուցեց Բաբ ալ Աբվաբը, որը Աբվաբ կոչվեց, որովհետև շինված էր լեռնային անցքի վրա և այդ վայրում բնակեցրեց Սայասջին[14] կոչված մի ժողովուրդ։ Հետո կառուցեց Առանի երկրի մեջ Շաքիի և Կամիրանի դռները...»[15]։ Այս միջոցառումների շնորհիվ շուտով Կասպից ծովի արևմտյան ափին գտնվող Խարվանը, Շիրվանը, Մազկանը, Ղեկաց և Թավասպարների ազգագավառները, Ջոդի ողջ տարածքը, ընդհուպ մինչև Դերբենդն իր շրջակայքով, ազատվեցին խազարներից։ Այնպես որ VI դարի կեսերին Սասանյանները ամուր կերպով հաստատվել էին Կասպից ծովի ողջ մերձափնյա շրջանում։ Ընդ որում նշված շրջանները Սասանյանները միացնում էին Աղվանից մարզպանությանը, դեպի հյուսիս շարժվելուն զուգընթաց կառուցելով պաշտպանական ամրություններ[16]։

Այս տերիտորիալ աճից հետո Աղվանից մարզպանության ընդգրկած տարածությունը ընդարձակվում է հյուսիսից մինչև Դերբենդի ամրությունները, արևելքից՝ մինչև Կուրի Կասպից ծով թափվելու կետը, արևմուտքում նրա սահմանները հասնում էին մինչև Հնարակերտ ամրոցը, իսկ հարավում՝

---

13 Баладзори, Книга завоевания стран, пер. П. К. Жузе, Баку, 1927, էջ 5։

14 Սիսաջանցիներ-սիսականացիներ-սյունեցիներ, տե՛ս С. Т. Еремян, Сюния и оборона Сасанидами Кавказских проходов, «Известия» АрмФАНа, 1941, № 7, էջ 37։

15 Յակուտ ալ Համավի, Աշխարհագրական բառգիրք, տե՛ս «Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 17։ Նաև՝ Баладзори, նշվ. աշխ., էջ 6։

16 С. Т. Еремян, Политическая история Албании III—VII вв., էջ 316։

Արաքս գետը։ Նշված սահմաններում Աղվանից մարզպանությունը գրավում էր 72205 քառ. կմ տարածություն[17]։

Ավարտուն ու վերջնական ձև ստացած Աղվանից մարզպանությունը ընդգրկում էր «Աշխարհացույցի» «բուն աշխարհն Աղուանից» երկիրը. Հայաստանից անջատված Արցախ և Ուտիք նահանգները, Կասպից ծովի արևմտյան ափին գտնվող Խորվան, Շիրվան, Բազկան, Ղեկաց և Թավասպարաց ազգագավառները։

Անդրկովկասյան երկրները մեկ անգամ ևս ենթարկվեցին Պարսկաստանի բռնությանը. իր ընդարձակ տերության ողջ տարածքը այս անգամ արդեն բաժանելով չորս մասի՝ քուստակների, Մեծ Հայքը, Վիրքը, Աղվանքը, Ատրպատականն ու մի քանի մանր ազգագավառներ նա մտցրեց Հյուսիսային քուստակի մեջ, որ հայ մատենագրության մեջ հայտնի է «Քուստ ի Կապկոհ» անունով։ Քուստակների ստեղծումով, որոնց գլուխ կանգնած էին պատգոսպանները, ամբողջանում էր պարսից քաղաքականությունը Անդրկովկասում։

Աղվանից մարզպանության կազմավորման խնդիրը իր ներքին հանգույցներում կրում է լուծում պահանջող մի քանի հարց ևս։

Առաջինը մինչև 461 թ. Զողում մարզպանի գոյության հարցն է։ Ենթադրվում է, թե նա կարող էր լինել Աղվանից մարզպան։ Եղիշեն հայտնում է, որ Աղվանից հետ հայերի ունեցած դաշնակցային պարտավորության համաձայն, Վարդան զորավարի բանակը հարձակվում է Զողի մարզպանի վրա, «որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից»[18]։

Եթե ընդունենք, որ Զողի մարզպանը Աղվանից մարզպանն էր, ապա այս վկայությունից այնպես է ստացվում, որ Աղվանքի մարզպանը եկել էր ավերելու Աղվանքի եկեղեցիները, որ մի անիմաստ բան կլիներ։ Ուրեմն պատմիչի այն խոսքերը, թե նա «եկեալ էր ավերել զեկեղեցիսն Աղուանից» (այնպես ինչպես դա կասվեր դրսից եկած օտարի մասին), թույլ են տալիս եզրակացնելու, որ եկողը դրսից էր և հետևաբար չէր կարող լինել Աղվանքի մարզպանը։ Այդ վկայվում է նաև Եղիշեի ու Ղազար Փարպեցու տեղեկություններով։

Ուսումնասիրվող դեպքերին ժամանակակից Եղիշեն գրում է, որ օգնության խնդրանքով Հայաստան եկած «հազարապետն Աղուանից սուրբ եպիսկոպոսաւ աշխարհին» հայտնում են, որ «գունդն պարսից, որ էր ի կողմանս աշխարհին հոնաց, դարձաւ այսրէն, եկն նմուտ յաշխարհս մեր, և բազում ևս և այլ այրուձի որ ի դրանէ եկն։ Եւ թող զայս ամենայն, այլ երեք հարիւր մոգ վարդապետ ածեալ ընդ իւրեանս, պառակտեցին զաշխարհն, և զոմանս ոմանս յինքեանս արկին, և կամէին յեկեղեցին ձեռն արկանել»[19]։ Այս հաղորդումից հետո է, որ Եղիշեն խոսում է հայոց գնդերի բաժանվելու և Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ աղվաններին օգնության գնացող գնդի մա-

17 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 34։ Աղվանքի կրած տերիտորիալ-վարչական այս փոփոխությունները ցույց են տրված «Հայկական սովետական հանրագիտարանի» համար Ս. Տ. Երեմյանի կազմած «Աղվանքը 387—706 թթ.» քարտեզում, տե՛ս ՀՍՀ, հատ. 1, Երևան, 1974, էջ 264։

18 «Եղիշէի Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին», ի լոյս ածեալ բաղդատութեամբ Ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 70։

19 Նույն տեղում։

սին. հայտնելով, որ վերջինս գնալու էր «ի վերայ մարզպանին Ճորայ, որ եկեալ էր աւերել զեկեղեցիսն Աղուանից»[20]։ Բերված վկայությունների համադրությունից երևում է, որ խոսքը գնում է միևնույն դեպքի և միևնույն գործող անձերի մասին, այն տարբերությամբ սակայն, որ երկրորդ վկայության մեջ Հոնաց կողմերից և պարսից արքունիքից եկած գնդերի փոխարեն նշվում է Ջողի մարզպանը՝ Սեբուխտ անունով[21]։

Փարպեցին էլ, որ նույն դեպքերի պատմությունն է անում, մեզ հետաքրքրող հարցի կապակցությամբ գրում է. «Իշխանն Սիւնեաց Վասակ վաղվաղակի գաղտ դեսպանս առնէր առ Միհրներսեհ հազարապետն Արեաց և զիւր նենգաւոր խորհուրդն (հայոց գնդերի բաժանելու մասին—Հ. Ս.) նամակաւ ծանուցանէր նմա։ Նոյնպէս արար նամակ և առ Նիխորական Սեբուխտ և առ այլ աւագս, զորս արարեալ էր Միհրներսեհի ի վերայ Հայոց»[22]։

Փարպեցու այս վկայությունը, որով պարզվում է, որ Սեբուխտը մեկն էր այն ավագներից, որոնց բերել էր Միհրներսեհը, լրացնելով Եղիշեին, նաև հաստատում է մեր վերոհիշյալ ենթադրությունը։

Եղիշեի մի ուրիշ վկայությամբ Վասակ Սյունին իր պառակտիչ գործունեությունը ծավալում էր նաև «ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց»[23]։ Ինչպես երևում է այս հատվածից, ընդգծված երկրները հիշատակված են առանձին-առանձին, մի բան, որ չէր լինի Աղվանից մարզպանության գոյության դեպքում, որովհետև նրա կազմավորման ժամանակ է, որ Արցախը դառնում է այդ մարզպանության բաղադրիչ մասերից մեկը։ Նշանակում է, Ավարայրի ճակատամարտից առաջ կամ այն ժամանակ, երբ հիշվում է Ջողի մարզպանը, Արցախը դեռ գտնվում էր Մեծ Հայքի կազմում, այսինքն Աղվանից մարզպանությունը դեռևս չէր կազմավորվել։ Հետևաբար, Ջողի մարզպանն էլ չէր կարող լինել դեռ գոյություն չունեցող մարզպանության պաշտոնատար անձը։ Եվ, վերջապես, եթե այս Սեբուխտը լիներ Ջողում նստող Աղվանից մարզպանը և Եղիշեի «եկեալ էր աւերել» արտահայտությունը վերաբերեր Ջողից գալուն, ապա պատմիչը նրան կասեր ավելի շուտ Աղվանից քան թե Ջողա մարզպան, որովհետև մարզպանությունը կրում էր «Աղվանից» անունը։ Երբեք էլ մարզպանները չեն կոչվել իրենց նստավայրի անունով՝ Աղվանքում «Պարտավի մարզպան», Հայաստանում՝ «Արտաշատի» կամ «Դվինի մարզպան»։

Այսպիսով, հիշյալ Սեբուխտը չէր կարող լինել Աղվանից մարզպանը։ Նա, անկասկած, Հոնաց երկրից վերադարձած պարսկական գնդի և Ճորա պահակի պահպանման համար այնտեղ մշտապես պահվող այրուձիու հրամանատարն էր և, հավանական է, նաև տեղի (Ջողի ռազմական շրջանի) քաղաքացիական բարձրաստիճան իշխանավորը, որն էլ իրավունք էր տալիս նրան մարզպան կոչելու, քանի որ մարզպանները իրենց մեջ մարմնավորում էին քաղաքացիական և զինվորական իշխանությունը։ Սեբուխտի մասին աղբյուր-

20 Նույն տեղում, էջ 74։

21 Նույն տեղում, էջ 75։ Կաղանկատվացին սրան անվանում է «Մերսեբուխտ» (Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 127, 128)։

22 Փ ա ր պ ե ց ի, էջ 136։

23 Ե ղ ի շ ե, էջ 94։

ները լռում են հենց որ հայ-աղվանից միացյալ բանակը գրավում է Ճորա պահակը և այնտեղ զորահրամանատար նշանակում Վահանին[24]։ Համոզված ենք, որ ոչ ոք չի եղրակացնի, թե այդ փաստով Վահանը դարձավ Աղվանից մարզպան։

Հետաքրքրական է նաև Վաչագան III Բարեպաշտի օրոք կամ, որ նույնն է, Աղվանից մարզպանության շրջանում թագավորության գոյության հարցը։

Մովսես Կաղանկատվացին հայտնում է, որ Պերոզի եղբայր Վաղարշի (484—488) թագավոր դառնալուց հետո Աղվանքի թագավոր է դառնում Վաչագան III Բարեպաշտը։ Ինչպե՞ս հասկանալ սա, թագավորության վերականգնո՞ւմ, թե՞ մարզպանության կազմում մի առանձին թագավորության ստեղծում, ինչպես կարծվել է հայ պատմագիտության մեջ[25]։

V դարի վերջերին Անդրկովկասի ժողովուրդները, օգտվելով այն բանից, որ Պերոզը զբաղված էր հեփթաղների դեմ պատերազմով, ապստամբություն բարձրացրին Պարսկաստանի դեմ։ Թեև ապստամբության նախաձեռնողն ու ոգեշնորհը վրաց թագավոր Վախթանգ Գորգասալը եղավ[26], սակայն նրա ամբողջ ընթացքի վրա ազդում էր Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը Հայաստանում։ Անդրկովկասյան ժողովուրդների այս պայքարից հետո չմնաց և Աղվանքը։

Հեփթաղների դեմ մղվող ծանր, երկարատև պատերազմը, անդրկովկասյան ժողովուրդների հզոր ապստամբությունը և հատկապես Վահան Մամիկոնյանի հասցրած հարվածները տագնապալի վիճակ ստեղծեցին սասանյան Պարսկաստանի համար, որը տենդագին միջոցներ էր փնտրում երկիրը դուրս բերելու ստեղծված վտանգավոր իրավիճակից։ Սպանված Պերոզին պարսից գահի վրա փոխարինած Վաղարշը շտապում է հանգցնել ապստամբական հրդեհը և հարկադրված է լինում 484 թ. նվարսակ գյուղում հաշտության պայմանագիր կնքել Վահան Մամիկոնյանի հետ՝ նրա իսկ առաջարկած պայմաններով։ Համաձայն այդ պայմանագրի կետերից մեկի, Վաղարշը փոխում էր նաև իր քաղաքականությունը անդրկովկասյան երկրների նկատմամբ։ Այդ փոփոխությունը իր արտահայտությունն է գտնում տեղական ազնվականության արտոնությունների վերականգնման հարցում։ Շուտով՝ 485 թ., Վաղարշի հրամանով Տիզբոն է կանչվում Վահան Մամիկոնյանը, որին հանձնվում է հայոց երկրի մարզպանի պաշտոնը[27]։

Նույնպիսի քաղաքականություն Վաղարշը վարում էր նաև Աղվանքում, որի շնորհիվ էլ երկրի իշխանական ղեկի մոտ կանգնեց տեղական ազնվականության ներկայացուցիչը՝ Վաչագան III Բարեպաշտը. «Յայնժամ,— գրում է Կաղանկատվացին,— նախարարք Աղուանից առեալ զիւրաքանչիւր իշխանութիւնս միաբանեալ առնին զՎաչական ի իւրեանց հայրենի թագավորական զարմէն՝ քաջարութեամբ իմաստուն և վարժ խոհականութեամբ, բարձր և վայելուչ հասակաւ, որդի Յազկերտի եղբօր Վաչէի Աղուանից արքայի տարեալ թագաւորեցուցանէին ի ձեռն Վաղարշակայ արքային Պարսից»[28]։ Ըստ այս

24 Փարպեցի, էջ 140։ Եղիշե, էջ 78։

25 Բ. Ուլուբաբյան, Աղվանից թագավորական տան հարցի շուրջը, էջ 61։

26 Փարպեցի, էջ 259։

27 Նույն տեղում, էջ 353—357, 393։

28 Կաղանկատվացի, էջ 57։

վկայության, Վաչագան Բարեպաշտը ևս մեկնել էր Տիզբոն և քաղաքացիական իշխանության բարձրագույն աստիճանը ստացել Հաղարշից։

Այսպիսի քաղաքական հանգամանքների բերումով էր Աղվանքում հաստատվել Վաչագան III-ի իշխանությունը, որ պատմիչը անվանում է թագավորական շրջան։ Սակայն չի կարելի ասել, թե Վաչագան III-ի իշխանության գլուխ անցնելով Աղվանքում վերականգնվեց թագավորությունը և կամ, որ առավել սխալ կլինի, ստեղծվեց առանձին թագավորություն Աղվանից մարզպանության կազմում։ Եթե, այնուամենայնիվ, ընդունենք էլ այդպիսի թագավորության ստեղծման հնարավորությունը, ապա գա լինելու էր մի այնպիսի թագավորություն, որի սկզբնավորողն ու եզրափակողը կլիներ նույն ինքը՝ Վաչագան III Բարեպաշտը։ Պարզապես պարսից արքունիքը, վերը նշված պայմանների թելադրանքով, հարկադրված էր սիրաշահել տեղական ազնվականությանը և Աղվանից ողջ մարզպանության ընդգրկած սարածքից Արցախի, Կամբեճանի, բուն Աղվանքի[29] (հավանաբար որոշ մասի) ու, անկասկած, նաև Ուտիքի վրա նշանակեց տեղի ազնվականության ներկայացուցչին, առերևույթ նրան թողնելով «թագավոր» տիտղոսը կրելու իրավունքը, քանի որ նա սերում էր Աղվանքում թագավորող տոհմից, ինչպես գրում է պատմիչը՝ «թագավորական զարմէ» էր։ Բայց հարկ է ավելացնել, որ իր թագավորության ողջ ժամանակաշրջանում չէ, որ Վաչագան Բարեպաշտի իշխանությունը տարածվում էր նշված հողերի վրա։ Այն աստիճանաբար ավելի հաստատուն է դառնում Կուրի և Արաքսի միջև ընկած շրջանում։

К ВОПРОСУ ОБ ОБРАЗОВАНИИ МАРЗПАНСТВА КАВКАЗСКОЙ АЛБАНИИ

Кандидат историч. наук Г. С. СВАЗЯН

(Резюме)

После окончательного завоевания Кавказской Албании (Агвании) сасанидским царем Перозом (457—484 гг.) царская власть в стране была упразднена. В отличие от датировок образования марзпанства Кавказской Албании 387 или 428 годами мы полагаем, что марзпанство в этой закавказской стране могло образоваться только после лишения престола царя Вече II в 461 г., что подтверждается анализом сведений Мовсеса Каганкатваци. Одновременно показывается, что, в соответствии с принципами создания марзпанства Сасанидами, тогда же от Великой Армении были отторгнуты области Арцах и Утик, которые были присоединены к новообразованному марзпанству. Эта новая политико-административная единица расширялась по мере завоевания Сасанидами прикаспийских областей (с VI в.). В статье рассматриваются и другие вопросы, связанные с образованием Агванского марзпанства.

29 Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 57—60։